ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, թիվ 85, հեռ. 54-78-95, ֆաքս 54-78-94, էլ. փոստ
araratbank@araratbank.am
Հաշվետվություն թիվ 02, 10.05.2023թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 06.04.2023թ. որոշում (որոշում **ՈՐԽ0102-06/L**) Կոտայք մասնաճյուղի կանոնադրությունում փոփոխություն կատարելու մասին:

AraratBank
0002, ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 87 շենք, 85 տարածք (+374)10 59 23 23 info@araratbank.am | araratbank.am

ք.Երևան

Կոդ: ՈՐԽ0102-06/L
Դաս: ԾԳ
«06» ապրիլ 2023թ.

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ԽՈՐՀՈՒՐԴ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ.
ԿՈՏԱՅՔ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հոդված 21[6]-ի 1-ին մասի ժդ) կետը, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ կանոնադրության 12.1 կետի ժդ) ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվում է Կոտայք մասնաճյուղի գործունեությունը նոր տարածքում ծավալել՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Խորհրդի 2019 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 18/03L որոշմամբ հաստատված Կոտայք մասնաճյուղի կանոնադրությունը հաստատել նոր խմբագրությամբ (կցվում է):
2. Հանձնարարել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Գործադիր տնօրեն Միեր Անանյանին ապահովել ՀՀ, Մարզ Կոտայք, համայնք Աբովյան, գյուղ Վերին Պտղնի, 5-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 5 հողամաս (1-ին հարկ, Բ 15 տարածք) հասցեում բանկային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և ապահովել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ Կոտայք մասնաճյուղի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության գրանցման հետ կապված գործընթացը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Գ. Հովհաննիսյան**

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ • ARARATBANK OJSC • ՀՀ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ՓԲԸ • 02500518